ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Արձանագրություն թիվ 2

գ. Վ. Շորժա 28. 01. 2012թ.

Համայնքի ղեկավաի 2011 թվականի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ

Մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ վարչության գլխավոր մասնագետ Ա. Հարությունյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆին. տնտ. վարչության մասնագետ Սամվել Սաֆարյանը, համայնքի ավագանին և բնակչությունը:

1. Օրակարգ - համայնքի ղեկավարի 2011թ. տարեկան հաշվետվություն

Կատարված աշխատանքները գնահատվեցին բավարար:

(կից՝ տարեկան հաշվետվություն)

Ժողովի նախագահ՝_____ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Բարսեղյան

Ժողովի քարտուղար՝ _____աշխատակազմի քարտուղար Ա. Մադոյան

Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա համայնքի ղեկավար Ա. Երանոսյանի 2011 թվականի կատարած աշխատաքների մասին

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր, ավագանու անդամներ

իմ կողմից ներկայացվող հաշվետվությունն ընդգրկում է 2011թ. կատարած գործունեությունը:

Այն Վ. Շորժա համայնքում կատարված աշխատանքների և բյուջեի կատարողականի մասին է:

Վ. Շորժա համայնքը տարածաշրջանում հայտնի է իր բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններով: Ծովի մակերևույթից գտնվում է 2460մ բարձրության վրա: Շրջկենտրոնից գտնվում է 18կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոնից՝ 96կմ:

Համայնքում ապրում են 46 բնակիչ, որոնք զբաղվում են անասնապահությամբ և գյուղատնտեսական աշխատանքներով:

Վ. Շորժա համայնքում չեն գործում տրանսորտային միջոցներ, չկա մսուր-մանկապարտեզ, դպրոց, մշակույթային կենտրոն, բուժկետ: Գոյություն ունեցող ջրագիծը ենթակա է կապիտալ վերանորոգման:

Գործող ճանապարհները վթարային են խիստ ձմեռվա պայմաններում, եթե չլինի համայնքի ղեկավարի բարեխիղճ աշխատանքը ճանապարհների մաքրման ուղղությամբ, համայնքը երկար ժամանակ կապ չի ունենա արտաքին աշխարհի հետ:

Թվարկված գործոնները մեծ բացասական ազդեցություն են թողնում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և միգրացիայի վրա:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքներով՝ համայնքի ՏԻՄ մարմինները իրենց գործունեությունը հիմնականում նպատակաուղղել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծման, համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բարելավման հարցերին:

1996թ.-ից մինչ օրս համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով բարեփոխումների ոչ մի ծրագիր չի իրականացվել: Գյուղապետարանը չունի համապատասխան ֆինանսական և նյութական հնարավորություններ այդ խնդիրների լուծման համար:

Սակայն այդ տարիների ընթացքում համայնքի ղեկավար Ա. Երանոսյանը իր անձնական միջոցների հաշվին բազմիցս կատարել է ներդրումներ՝ ջրագծի վերանորոգման, ճանապարհների հարթեցման և մաքրման աշխատանքներում, ինչպես նաև բնակչությանը օգնել է գյուղատնտեսական մեխանիզացիայով և սերմացուներով՝ վարուցանք անելու, բերքահավաքը և անասնակերի կուտակման աշխատանքները ժամանակին կատարելու համար:

Վ. Շորժա համայնքն ունի բավարար արոտավայրեր և խոտհարքներ, որտեղ կարելի է զարգացնել անասնապահությունը, հիմնականում ոչխարաբուծությունը:

Համայնքի տարածքում կան ոսկու և շլակի հանքանյութեր: Դրանց շահագործումը մեծ դրական ազդեցություն կունենա ինչպես բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, այնպես էլ համայնքի զարգացման վրա:

Վ. Շորժայի գյուղապետարանի աշխատակազմի ապարատը բաղկացած է 4 անդամից, ովքեր իրենց աշխատանքային գործունեության ընթացքում բարեխղճորեն կատարել են 2011թ. բյուջեի եկամուտների հավաքագրումը և ծախսերի կատարումը:

2011թ. համայնքի բյուջեն ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազ. դրամ/	Կատարվել է /հազ. դրամ/	%-ով
Հողի հարկ	11.0	11.0	100,0
Գույքահարկ	174.1	195,6	112,3
Հողի վարձավճար	2 309.5	2315,7	100,3

Գյուղապետարանն իր աշխատանքները կատարել է 104%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջեի եկամտային մասի մուտքերը ծախսվել են միայն աշխատավարձի և սոց. հատկացումների վրա:

Որպես համայնքի ղեկավար հավաստիացնում եմ, որ անհրաժեշտ բոլոր միջոցները կձեռնարկվեն համայնքի առջև դրված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, համայնքի բյուջեի եկամտային մասի հնարավորինս բարձր տոկոսների կատարման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Վ. Շորժա համայնքի ղեկավար՝_____ Ա. Երանոսյան

28.01.2012թ.